

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

⁷ ი.ე. ჯავახიშვილი, კლდეები, საქალაქო წყობილება და ცხოვრების ვითარება საქართველოში XVII-XVIII სს. (თბილისი, "პრომეთე", 1918, № 1, თბ., 49 კვ.).

արհեստներով, մոլշտակագործություն, դերձակություն, ժամագործություն, մետաքսագործություն (մետաքսե առասաններ պատրաստելը), թամբագործություն, կոշկակարություն, մաշկկազործություն, գլխարկագործություն, ներկարարություն, ոսկերչություն, արծաթագործություն, զինագործություն, կաշեգործություն, մոմագործություն (չամշիտություն), գործվածքի զարդագործություն, հացագործություն, լապտերագործություն, դարբնություն, փականագործություն, ջուհհակություն, մանածագործություն, հյուանություն, ատաղձագործություն, աղյուսագործություն, որմնադիրություն, պարանագործություն, ակագործություն, կաթսայագործություն, թաղիքագործություն, անագագործություն և այլն⁸։

XVIII դ. 80-ական թվականների Տփղիսին քաջատեղյակ գնդապետ Ս. Բուռնաշևը նշում էր, որ տփղիսահայերը «...աշխույժ առևտուր են անում լեռնալեռանների և պարսկահպատակ մերձակա հարևանների հետ արհեստագործական ապրանքներով... քանզի կովկասյան գրեթե բոլոր ժողովուրդները և դրացի մյուս ժողովուրդներն իրենց նման կարիքները հոգալու համար օգտվում են տփղիսաբնակ հայերի աշխատասիրությունից»⁹:

Անևտրի և արհեստագործության շնորհիվ Քարթլ-Վախեթի հայ ազգա-
բնակչության վերնախավի ձեռքին կուտակվում էին որոշակի դրամական մի-
ջոցներ, աճում էր, այսպես կոչված, «պատվավոր» քաղաքացիների (մոքա-
լաքների) թիվը, որոնք երկրի քաղաքական և տնտեսական կյանքում նշանա-
կալից դեր էին խաղում¹⁰։

XVIII դ. 60-ական թվականներին սկզբից Քարթլ-Կախեթի միացյալ թագավորության գահին բազմած Հերակլ II-ը քաջ գիտակցում էր, որ երկրի քաղաքական կայունութունը և պաշտպանունակությունը մեծապես պայմանավորված են երկրի տնտեսական զարգացման մակարդակով: Այդ իսկ պատճառով նա ամբողջ եռանդով հովանավորում ու խրախուսում էր առևտրի և արդյունագործության զարգացումը: Ահա թե այդ առթիվ ինչ է գրում Ս. Բուռնաշևը. «...ոչ մի բանի սակայն [Հերակլ II-ը] այնպես չի ձգտում, ինչպես իր ժողովրդին հվրոպական ձևով վերափոխելուն»¹¹, Այս հանգամանքով պիտի բացատրել այն խիստ դժգոհությունը, որ Հերակլ II-ը արտահայտել է 1773 թ. նոյեմբերի 16-ին Սիմեոն Երևանցուն հղած իր նամակում՝ հայ մեծահարուստ վաճառական Թարխան Աղամալյանի՝ ընտանիքով Աստրախան տեղափոխվելու մտադրության առթիվ և այն աննպաստ ընդթագիրը, որ տվել է արքան նույն անձնավորությանը 1774 թ. օգոստոսի 24-ին Ն. Պանինին գրած նամակում¹²:

XVIII դ. երկրորդ կեսին հիմնվում են համեմատաբար խոշոր արտադրական ձեռնարկութուններ, որպիսիք, թեև արքունի սեփականություն էին համարվում, սակայն հանձնվում էին կապալով: Որպես կապալառուներ հան-

⁸ ბ. ჯუჯუშვილი. საქართველოს და ამიერკავკასიის ეკონომიური განვითარება მც. XIX—XX სს., ტ. V, თბ., 1962, № 127.

⁹ С. Д. Бурнашев, Картина Грузии, Тифлис, 1896, стр. 23.

¹⁰ ლ. გოგოლაძე, კაპიტალიზმის გენეზისის საკითხისათვის რეფორმამდელი ხანის საქართველოში, მნათობი, თბ., 1959, № 9, გვ. 118.

¹¹ С. Д. Бурнашев, *Игш. шзш.*, 49, 10.

12 Վ. Մ. Մարտիրոսյան, Նյութեր հայ-վրաց-առաական հարաբերությունների մասին (XVIII դ. երկրորդ կես), ԶՅՍՀ 94 տարեգրք, 1974, № 12, էջ 97—99:

տալը ներդնում էին մասսայական, ինչպես և ֆեոդալական հասարակության վերնախավի գործածության համար արտադրանք թողարկող շահավետ այդ ձեռնարկություններում: Այսպես, 1796 թ. մարտի 1-ին Դարեջան թագուհին նսալի վարպետին կապալով հանձնել էր մի ներկատուն և այդ առթիվ պայմանագիր կնքել նրա հետ²⁰: Ահա այդ պայմանագիրը. «Մենք՝ Վրաստանի թագուհի Դարեջանս, այս ողորմածության գիրը շնորհեցինք քեզ՝ վարպես, նսախին և Մանգեանց Աղայի որդի Ստեփանին առ այն, որ ձեր հոժար կամքով քաղաքի (Բրիխսիխ—Վ. Մ.) ներկատունը կապալով վերցրիք 240 թոսմանով, այս տարվա մարտի 1-ից սկսած մինչև եկող տարվա մարտի սկիզբը: Եվ երբ տասներկու ամիսը կլրանա, վերը նշված կապալի գումարը ամիս առ ամիս մեր սարքարին [ղործակալին] պիտի մուծեք, գումարի կեսը արծաթ գրամով, իսկ մյուս կեսը՝ սև դրամով: Այս ժամկետից սկսած՝ 40 օրվա ընթացքում, եթե որևէ մեկը ավելին վճարի, ուրեմն ներկատունը նրան կտանք, իսկ եթե ավելին վճարող չլինի, ապա այդ գնով ձեզ կմնա: Գրվեց մարտի 1-ին, քրոնիկոնի 484 թ. (1796 թ.)»²¹: Ըստ երևույթին, կապալառուների հետ բանակցել է Հովհաննես Ղորղանյանը՝ թագուհու տնտեսական գործերի վերակացուն, որը 1796 թ. ապրիլի 4-ին Թելավում գտնվող Դարեջան թագուհուն զրել է «Սև դրամը այն պատճառով առանձին նշեցի, որ այժմ մեկ արծաթ արասուն վեց ու կես շահի են տալիս, կարծում եմ, որ մեկ արծաթ արասին երկուս կդառնա: Սա էլ երկու արասին մեկ արասու հաշվով կտա սարքարին շուկայի սարթափով (շուկայի կուրսով— Վ. Մ.): Այս այն նպատակով դրեցի պայմանագրով, որ չասի, թե կապալ է՝ սևով էլ ստացեք, սպիտակով էլ»²²:

Եթե ներկատան կապալառուն ներկարար չէր, ապա համապատասխան վարպետ էր վարձում: Այդ է վկայում XVIII դ. մի ուշագրավ վավերագիր, որտեղ նշված է, որ Տփղիսի ներկատների պետ Փիթոենց էլիզբարը վարձել է ներկարար Ավագին և նրան համապատասխան «ռոճիկ» վճարել²³, Ուրեմն, այստեղ գործ ունենք մանուֆակտուրային ձեռնարկության հետ, որտեղ կիրառվում էր վարձու աշխատանքը: Ներկատների գործունեության մեջ այդ ժամանակ ավելի ցայտունորեն էին նկատվում բուրժուական հարաբերությունների ձևավորման նշանները: Այս կապակցությամբ Դ. Գոգոլածեն իրավացիորեն գրում է. «Կապալառուի վարձած վարպետի, աշակերտների և բանվորների միջոցով գործարկվող արտադրական ձեռնարկության մեջ շահագործման ձևը նոր է, և նման ձեռնարկությունն իր սոցիալական բնույթով էականորեն տարբերվում է ֆեոդալական համջարային ձեռնարկություններից»²⁴:

Խոշոր ներկատներ կային Տփղիսում, Գորիում, Թեւալում, Սազարեջում, Անանուրում, Յիսինվալում և այլուր²⁵։ Ներկատների կապալառուների թվում էին դրամատեր վաճառականներ Մ. Սուրգունյանը, Ա. Միրիմանյանը,

20 Թագուհու հետ էր կնքված պայմանագիրը, քանի որ ներկատների մենաշնորհ սեփականատերը Քարթլիում թագուհին էր համարվում: Ներկատները հսկելու համար թագուհին համապատասխան պաշտոնյա ուներ, որը կոչվում էր ներկատների պետ (մզերարթուփուցեսի):

²¹ ე. თაყაიშვილი, საქართველოს სიძველენი, ტ. 3, თბ., 1910, № 246—247.

²² ე. თაყაიშგილი, *ზეპ. ძიგ.*, ტ. 2 326:

23 ნ. ბერძენიშვილი, წყ. საქ., 59 437.

²⁴ რ. გოგოლაძე, საქ. საზ., ტ. 116,

²⁵ ი. სურგულაძე, ქართული სამართლის ძეგლები, თბ., 1970, ტყ 718, 717.

որոնք կապալով վերցրած ներկատներում կիրառում էին վարձու աշխատանք²⁶;

XVIII դ. երկրորդ կեսին Քարթլ-Կախեթի համեմատաբար խոշոր արտադրական ձեռնարկություններից էր արքունի փողերանոցը: Արքունիքը այն սովորաբար հանձնում էր կապալով: XVIII դ. կեսերին այդ փողերանոցի կապալառուն էր մեծահարուստ վաճառական (խոջա) Բեհբուդյանների գերդաստանի ներկայացուցիչը, իսկ 1792 թ. այն 500 թուման կապալով վերցրել էին Մելիքենց Շաքարի որդի Գասպարը և իր գործընկերները, որոնք ունևոր մոքալաքներ էին²⁷:

Ներկատները, վառողի գործարանը և փողերանոցը կապալով վերցնող անձինք ճորտատեր ֆեոդալներ չէին, որ կարողանային իրենց ձեռնարկություններում սեփական ճորտեր աշխատեցնել: Ուրեմն, նման ձեռնարկություններում կիրառվել է վարձու աշխատանքը: Հետևաբար, այդ արտադրական հաստատությունները կարելի է դասել մանուֆակտուրային բնույթի ձեռնարկությունների շարքը, թեև պիտի նկատել, որ արհեստավորական արտադրության համեմատ մանուֆակտուրան ավելի նվազ նշանակություն ուներ²⁸, Մանուֆակտուրային բնույթի ձեռնարկություններ էին նաև Հովսեփ Ղորղանյանի ձեթի գործարանը, Պենտելենց Հովհաննի կավե ամանեղենի ձեռնարկությունը, արքունի տպարանը:

Ինչպես հայտնի է Քարթլիում տպարան հիմնադրվել է 1709 թ., սակայն թուրք-պարսկական զավթիչների ներխուժումը, Տփղիսի զավթումը և կողոպտումը XVIII դ. 20-ական թվականների սկզբներին խափանեցին մշակութային այդ կարևոր հաստատության գործունեությունը: XVIII դ. երկրորդ կեսին այն վերականգնվում, ընդարձակվում և տեխնիկայես բարելավվում է: Մեզ է հասել այն պայմանագիրը, որ 1781 թ. մայիսի 23-ին կնքվել է Հերակլ II-ի ներկայացուցիչ Մահտեսի Մելիտոնի և Պողոս դպիր Արապյանի միջև, որին Կոստանդնուպոլսից այդ նպատակով (ըստ երևույթին կաթողիկոս Ղուկաս Կարնեցու միջնորդությամբ) հրավիրել էին Տփղիս²⁹, Պողոս դպիրը տարեկան 3500 ղուռուշ աշխատավարձ ստանալու պայմանով պարտավորվել է Տփղիսում տպագրատուն ճհաստատեալ զբոլոր տառս վրաց ի շելիկ փորագրեալ, ապա ի պղինձ ֆորմայ արարեալ, և անտի յարձիճ թափեալ, զոր ինչ գիրք խնդրեսցին՝ զտառս շարեալ լաւագոյն մրով ի թեսգեաղ կալեալ գիրք տպելոց եմ»³⁰, Սակայն նա ոչ միայն պետք է գիրք տպագրեր, այլև տպագրական գործի վարպետներ պատրաստեր «և քանի աշակերտ որ յանձնեսցեն ինձ, զբովանդակ արհեստն տպագրութեան, աննախանձ և առանց ինչ թաղուցանելոյ ուսուցանել նոցա, մինչև առանձին զնոսին հմուտ տպագրիչ առնելոյ ջան դնելոց եմ...»³¹, Պողոս դպիրը հաջողությամբ գլուխ է բերել տպարանը վերաստեղծելու գործը: 1783 թ. Ղուկաս Կարնեցին այս առթիվ իր շնորհավորանքներն էր հղել Հերակլ II-ին. «Թիսկ և նարդենիս յաւելեր ի վերայ լող-

²⁶ Ե. Բյրժեգով, *Նշվ. աշխ.*, էջ 319—320,

²⁷ Նաթանեղոս Երեմյանի նախնային, Ե. V, տն., 1973, էջ 552:

²⁸ Նույն տեղում, էջ 553:

²⁹ Պայմանագրի տեքստը հրապարակել է Ա. Ագամյանը (*Երևանի Մատենադարան*, № 3, 1956, էջ 115—120):

³⁰ Նույն տեղում, էջ 118:

³¹ Նույն տեղում, էջ 118:

նազան մեծագործութեանցդ հաստատելի յօրհնեցելուով քաղաքօջ տպագրատուն, Զոր և բարեջան հօտեմամբ և ծանր ծախուք ի կատարումն ածեր, առ ի յաճախումն հոգեշահ գրոց... և մեք իմացեալ՝ յոյժ ուրախացաք: Եվ մանաւանդ ի նմա նորապես տպագրեցեալ զտետրակ մի ևս ընկալաք և թարգմանեցուցաք, և տեսանելով զպարզութիւն և զբարեձեւութիւն գրոցն, կարի հաւանեցաք, եւ ի ձեռն այսորիկ օրհնանուէր թղթոյ շնորհաւորեմ զնորահաստատ և զվալելակերտ տպարանդ»³²:

1783 թ. դեկտեմբերի 20-ին Կոստանդնուպոլսի նվիրակ Իսահակ վարդապետին գրած Ղուկաս Կարենցու նամակից տեղեկանում ենք, որ Հերակլ II-ը վերականգնված տպարանում լույս տեսած անդրանիկ գրքի հետ միասին գլաւ վայելչակերտ տպագրութեան դազկեհա է առաքեալ մեզ ընծայ հաստապինտ փայտից, հանդերձ ճարտար հիւսամբ»³³։ Այս առթիվ Պողոս Արապյանը գալիս է էջմիածին՝ տպագրական հաստոցը տեղադրելու և աշխատեցնելու համար։ Այդ տպարանի համար թուղթ հայթայթելու նպատակով Հերակլ II-ը Զաղատենց Ստեփանին ուղարկում է էջմիածին, որպեսզի Ղուկաս Կարենցին 300 թումանի ստացական տա Կոստանդնուպոլսում թուղթ գնելու համար։ Կաթողիկոսը այդ գումարի համար համաձայնվում է երկու նվազով ստացական տալ, որպեսզի նույն Պողոս Արապյանի հոր կամ այլոց միջոցով լավորակ թուղթ գնեն և ուղարկեն Տփղիս³⁴։

Տպարանը վերականգնելու, կատարելագործելու, ինչպես նաև Հերակլ II-ի կողմից էջմիածնի տպարանին տպագրական հաստոց նվիրելու իրողության մեջ արտացոլվել է հղբայրական հայ և վրաց ժողովուրդների բարեկամական համագործակցությունը մշակույթի զարգացումը խթանող բնագավառում:

Վրաստանում բնակվող հայերը զբաղվում էին նաև վաշխառությամբ³⁵, Հարկ է նշել, որ վաշխառությամբ պարապում են ոչ միայն առևտրա-արհեստավորական դասի, այլև ազնվականների ներկայացուցիչները։ Թեև վաշխառական կապիտալի շահագործման օբյեկտը հիմնականում մանր արտադրողներն էին՝ արհեստավորները և գյուղացիները, սակայն ֆեոդալական վերնախավի առանձին ներկայացուցիչներ նույնպես ընկնում էին վաշխառուների ճիրանները։ «Արդեն վրաց թագավորության ինքնուրույն գոյության ժամանակաշրջանում (XVIII դ. երկրորդ կեսին— Վ. Մ.) հայերի մեջ կային կապիտալիստներ։ Մզիվան Մանուչարը³⁶ Հերակլ II-ի օրոք, Վանելի Գեուրքը, Արտեմ Բոգզանովը Գեորգի XII-ի օրոք վարկ էին տալիս թագավորական ըն-

32 Նույն տեղում, էջ 117—118:

⁸³ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2803, ք. 179: Նույն ձեռագրի 203ա երեսին գետեպիված է Ղուկաս Կարնեցու շնորհակալագիրը Հյուսն Աթաբեկի կին Լալիսթարսին առ այն, որ նրա ավագ որդի Բաղդասարը սեկեալ, յԱթոռս, ղՀերբակ արքայի վրա ընծայեալ տպագրութեան գազեկահն յարմարապես կառույց ի տպարանի մերում:

34 Մատենադարան, ձեռ. Մ 2803, ք. 151—152:

³⁵ ვ. თაყაიშვილი. *ზღა. ჭილ.*, ტ. 522, ქაქ, 539, 540, სხვა წახს. დ. უჩანავი-
შვილი, დოკუმენტები, საქართველოს ეკონომიური ისტორიისათვის. თბ., 1967, ტ. 29—30.

36 իշխան Մանուկար Թումանյանը լինելով արքունի բարձրաստիճան պաշտոնյա, սերտ գործնական կապեր ուներ առևտրական կապիտալի ներկայացուցիչների հետ, մասնակցում էր այլեհայլ առևտրական գործարքներին։ 8. 1907 թ. 12 ամսին, Մանուկար Թումանյանը Երևանի քաղաքում, Կաթողիկոսի խաչատուրյան տանը, 1907, էջ 411:

